



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17635

G. Cooper  
1874

370.1

3 - 68

172

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԺՈՂ ՂՎՐԴԵԱՆ



ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ՏԱՃԱՐ ՄՈՒՍԱՅԻՑ



2010

12001

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

— 1874 —

370.1  
3-68

8108

370.1

3-68

### ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ (1)

Ազգերնու մէջ վարժարաններն ամեն կողմ կը յաճախեն , շատ ուղեղներ կը խոնջին , մեծ գումարներ կը ծախուին . և ի՞նչ նպատակու : — Ազգին մանկտին դաստիարակելու համար — կը գոչէ ամեն անձ : Բայց ի՞նչ է դաստիարակութիւնը : Չկայ համաձայնութիւն պատասխանուոյ ասոր դէմ , կարծիքներն հիմնովին իրարմէ կը տարբերին :

Արդէն աս անհամաձայնութեան առթած ֆլուսները զգալի եղած են , և շատ ազգասէրք գովելի նախանձով մը վառուած անոր դարման կը մտածեն , բայց յաջողութիւնը կատարեալ չերեւիր : Կայ հիւանդութիւն մը գաղափարաց , եթէ ներելի է խօսքս , և բժիշկք չեն կրցեր բոլորովին զայն ապաքինել : Բայց միթէ՞ ապաքինելի է այս ախտը , ոչ երբէք , Եւրոպայի միջին դարքն ներկայ դարուց հետ բազդատողը շուտ կը համազուի այս ճշմարտութեանը : Եթէ ապաքինելի է , ուրեմն մարդ չկրնար զիս մեղադրել եթէ ես ալ փորձ մը փորձեմ :

Թերեւս յանդգնութիւն համարուի փորձս , իսկ շարժառիթըս արդեօք ամենեւին ներողամտութեան չարժանանա՞ր : — Այս ներողամտութեանը , այս շնորհքին ապաւինելովս է ահա որ կհամարձակիմ անդամ մ'ալ հասարակութեան ներկայանալ , և ո՛հ , երանի թէ աշխատութիւնս ալ բոլորովին ապարդիւն չլինէր :

Երզնկա 1859

Խաչատուր Բ. Իոթիանեան

153  
40



(1) Այս հրատարակածնիս , որ սիրելի հանգուցեալ Եղբօս գրութիւնն է , եւ Հայաստան ճամբորդուած ատեն , խմբագրած , բարեբախտաբար մեր ձեռքն անցած ըլլալով որոշեցինք մասն առ մաս հրատարակել :



# ՏԱՃԱՐ ՄՈՒՍԱՅԻՑ

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

## ԱՌԱՋԻՆ

ԱՐՄԵՆԱԿ. Ասիացին, Եւրոպացին, Ամերիկացին և այլն ամենքնալ միեւնոյն նախահօրն սերունդքն են. բայց իրարմէ մեծապէս կտարբերին բնաւորութեամբ ու ճաշակաւ : Ասիացին՝ ծոյլ է և անհօգ . Եւրոպացին՝ ժիր ու արթուն, և Ամերիկացին՝ անգութ ու վայրագ : Փափուկն է Եւրոպացուոց ճաշակի որոշիչ հանգամանքը, հարուստ կամ ճոխն՝ Ասիացուոցը : Ո՛չ, երկրագնացոյս մի և նոյն բաժնին մէջ Սահմանակից ազգերը իրարմէ շատ կզանազանին . Անդդիացիք հաստատամիտ են ու տխուր . Գաղղիացիք թեթեւամիտ ու զուարթ :

Այսպիսի պատճառանօք է նաեւ որ միեւնոյն երկրին ժողովուրդը մէկ դարէն միւսը ինքն իրեն չնմանիր . մէկ դարուն մէջ անհարկու եղած Ազգը միւսին մէջ անհարեկեալ կգտնուի : Ազգի մը շէնքը ի հիմանց խարխարեալ կը կործանի, ուրիշ մը անոր աւերակացը վրայ կենէ, կը կանգնի : Ազգ մը իբր թէ խոր քնոյ մէջ ընկղմած, կանգաւայանայ . ուրիշ մ'ալ դարեր այնպէս անցունելէ ետեւ յանկարծակի կըսթափի : Ինչպէս :

Հելլէնք և Հռովմայեցիք ի սկզբան անզօր պետութիւններ էին : Առաքինութեամբ յառաջացան, և իրենց զինուցը զօրութեանը չափ իրենց մեծահոգիութիւնն ալ բոլոր աշխարհք հռչակուեցաւ : Վերջը զեղխութեան մէջ ընկնելով, վատացան, ցածացան և իրենցմէ տկարներէն ոտնակոխ եղան :

Ոչ, միեւնոյն երկրին ժողովուրդք իրար չեն նմանիր : « Կը զարմանամ և չեմ դադարիբ զարմանալէ, կըսէ Թէոփրաստոս, թէ, ինչպէ՛ս բոլոր Հելլէնք միեւնոյն օգը կը ծծեն և այնքան իրարմէ կը տարբերին բնաւորութեամբ » :

Ոչ, միեւնոյն անհատը մէկ տարիէն միւսը ինքն իրմէ կը տարբերի : Աւգոստոս կեսար անգութ էր կայսր չեղած, բայց ըլլալէն ետեւ ներողամտութեան օրինակ հանդիսացաւ :

ԳՈՒՐԳԷՆ. Զարմանալի՛ ճշմարտութիւն, և ի՛նչ են պատճառք այս տարբերութեանը :

ԱՐՄԵՆԱԿ. Ազգերը իրարմէ կտարբերին տեղական պատճառ-

ներով : Երկրի մը դիրքն ու կլիմայն մեծ ազդեցութիւն կընէ մարդոյս վրայ . լեռնային երկիրներու ժողովուրդները ազատաբարոյ, ջերմ երկիրներունը թոյլ, ցուրտ երկիրներունը կորովի, դաշտայինները կասկածոտ, երկչոտ կըլլան : Լեզուներն ալ ըստ այնմ կերպացեալ են . ջերմ երկիրներու լեզուները շատ կտարբերին ցուրտ երկիրներու լեզուներէն . լեռնային երկիրներունը դաշտային երկրաց լեզուներէն : Իտալիոյ և Ելլագայ պայծառ երկնքին ներքեւ անոյշ լեզուովք կը խօսին . Նորմաններու լեզուացը չպակտիր փափկութիւն . բայց զուրկ են այն ներդաշնակաւորութենէն, որով կը պանծայ Հելլենական և Իտալականը :

Ըսել է որ երկրին կլիմայէն, դիրքէն և շն. մարդուս կազմը ուսածքը կազդուի և կազդէ հոգւոյն, մինչեւ անգամ մարմնոյ առողջութեան վիճակը կազդէ անոր : Տկարացած ատենդ կըրնա՛ս ամեն անգամ ըստ սովորութեան ազատօրէն խոկալ, մըտածել : Եւ միթէ չէ՛ եղած որ հիւանդութեան մը պատճառաւ մարդ իր մէկ իմացական կարողութիւնը խանգարած գտէր իր մէկ շատ ծանօթութիւնները, մինչեւ անգամ ամբողջ լեզուի մը գիտութիւնը կորուսեր է :

ԳՈՒՐԳԷՆ. Պէտլտիայի օգը հռչակուած էր թանձրութեան կողմանէ և մարդիկը թանձրամիտ ճանչուեր էին, հապա Պլուտարքոս ինչպէ՛ս այնքան անուանի եղաւ իմաստասիրութեան գրագիտութեան մէջ :

ԱՐՄԵՆԱԿ. Ինչպէս որ մէկ դարուն մէջ անշուք ազգ մը միւսին մէջ ազդեցութեան տէր կըլլայ, Գալիֆոռնայի ոսկւոյ հանքերն ի սկզբանէ աշխարհի կային . բայց միացեալ նահանգաց Ամերիկիոյ մէկ արշաւանքը զայն երեւան հանեց :

ԳՈՒՐԳԷՆ. Ի՛նչ ըսել կուղէք :

ԱՐՄԵՆԱԿ. Ըսել կուղեմ թէ տեղական պատճառներն չափաւորող, հզօր ընող միջոց մը կայ :

ԳՈՒՐԳԷՆ. Ի՛նչ է այդ միջոցը :

ԱՐՄԵՆԱԿ. Դաստիարակութիւնն է որով մարդ կամ վայրենի կամ կէս վայրենի և կամ քաղաքակրթեալ կրնայ ըլլալ :

ԳՈՒՐԳԷՆ. Ինչպէ՛ս կըլլայ մարդս վայրենի :

ԱՐՄԵՆԱ. Անձակ թողլով իր իմացական ու բարոյական ձիրքերը :

ԳՈՒՐԳԷՆ. Իմացական և բարոյական ձիրք ըսելով ի՛նչ կիմանաս :

ԱՐՄԵՆԱԿ՝ Խեղքը , միտքը , խիղճն ու կամքը :

ԳՈՒՐԳԵՆ . Կէս վայրենի ինչպէս կըլլայ մարդ :

ԱՐՄԵՆԱԿ . Կէս մը մշակելով իր կարողութիւնները :

ԳՈՒՐԳԵՆ . Քաղաքակրթեալ ինչպէս կրնայ ըլլալ :

ԱՐՄԵՆԱԿ . Կատարելապէս կամ լիովին ծաւալելով զանոնք :

Ափրիկէի և Ամերիկայի ներքին ազգերը վայրենի են , ձեռնաստանցիք և Հնդկաստանցիք կէս վայրենի : Եւրոպացիք քաղաքակրթեալ : վայրենիները ընդհանրապէս կռադաշտ են . շատ մլասակար ծեսեր ու սովորութիւններ ունին , ինչպէս է մարդազոհը , ծնողքնին ծերութեան ատեն անխնամ թողուին և ին . և բոլորովին անտեղեակ են գիտութեանց և արուեստից , հետեւաբար և զուրկ ամեն տեսակ կարեւոր պիտոյից : Այսպիսիք չգիտեն մինչեւ անգամ երկրի մշակութիւն , կրակի դործածութիւն հաց , եփել և այլն :

Կէս վայրենի ազգերը մտած են քաղաքակրթութեան ասպարիզին մէջ բայց դեռ եղերքը կը թափառին . Աստուած մը կը պաշտեն , բայց դեռ գերադոյն էակին ստորագելիքն լիովին չեն ճանչեր : Կարեւոր ճշմարտութեանց ծանօթութիւն ունին բայց անոնց հետ մէկ շատ ստույթիւններ խառնած են . անթիւ սնտոխապաշտութիւններ ունին և շատ անգամ կրօնամոլութեամբ կը կատարեն : Իսկ կրթեալ ազգերը կը ճանչեն զճշմարիտ Աստուածը և անոր ստորագելիքն փլարքներէ , Ֆենելոններէ դաս կառնուն . Լսքերն խղճի կամ կրօնական ազատութեան դադարն իրենց կը ծաւալեն . Նեփտոններն ֆիզիզական օրէնքներն կը բացատրեն . Պէօքըններն իմացականին օրէնքները կը բանան . կթուեն երկնից աստղերը և անոնց ընթացքը կը չափեն . Ի հաշիւ կառնուն երկրի տարածութիւնը և անոր զանազան գիրքը կատարեն , կը քննեն կենդանեաց և բուսոց տեսալներն ու յատկութիւնները և կը դործածեն զանոնք ի պիտոյս իւրեանց : Չեռագործներն բնութեան գործոցը կը նմանեցնեն . շոգենաւուք ծովուն վրայ , շոգեկառքով ցամաքը կարչաւեն , և օդապարիկով օդոյն մէջ կթափառեն : Ելեքտրական թելերով բիւրաւոր մղոն հեռաւորութեան մէջ իրարու հետ կխօսակցին : Տպագրութեան միջոցաւ մէկ անձին խորհուրդներն ու կարծիքը բոլոր աշխարհք կը տարածեն . կարծ խօսքով տիրապէս կը վայելեն զերկիրս . մարդասիրութիւննին բանաւոր է . ընկերութիւննին զուարճալի և տնտեսութիւննին իմաստուն :

ԳՈՒՐԳԵՆ . Ի՛նչպիսի դաստիարակութեամբ մարդս կամ ազգ մը քաղաքակրթեալ կրնայ ըլլալ :

ԱՐՄԵՆԱԿ . Բնականին համեմատ մշակելով մեր թէ բնական թէ իմացական և թէ բարոյական կարողութիւնները . այսինքն մարմնոյն աճմանը նպաստելով , ջիղերը կազդուելով և կորուզութիւն ու սրութիւն մատակարարելով մեր բոլոր զգայարանացն ու դործարաններուն : Ծաւալելով մեր իմացական ձիրքերը , այսինքն յիշողութիւնը , երեւակայութիւնն ու տրամաբանութիւնը իրենց ծաւալման ընդունակութեանը համեմատ : Հաղորդելով իմացականութեան կարեւոր ծանօթութիւններ . լուսաւորել զխիղճը և կազդուելով կրթութիւններով զօրացնել կամքն ու զգացումները փափկացնել :

ԳՈՒՐԳԵՆ . Ի՛նչ է գիտութիւնը :

ԱՐՄԵՆԱԿ . Գիտութիւնը լոյս է . բայց անմշակ մտաց օգտակար չկրնալ ըլլալ : Դալարազարդ դաշտ մը կայ բլրին ետին . իսկ դու ոչ բլրին դադաթնես , ոչ ալ եթէ հոն գտնուիս . աչուրներդ բաւական մշակուած են կամ թէ բաւական հեռատեսութիւն ունին , դաշտին մէջ եղածն որոշելու :

Քաղաքակրթեալ , վայրենի ու կէս վայրենի ազգերը իրարու հետ բաղդատելով մէյ մէկ արտի կրնանք նմանցնել . առաջինը լաւ մշակուած , ուր վճիտ ջրոց աղբիւրներ կոռօգեն , ուր ամեն կողմ ակնապարար դալար կերեւի , ուր դոյնզգոյն ծաղկունք անուշահոտութիւն կը բուրեն . ուր քաղցրահամ միրգերը կը զովայնեն , առողջարար պտղեղէնք կը սնուցանեն :

Անկիրթ կամ թէ քաղաքակրթութիւն չեղած տեղուանքն արտի մը կը նմանին , որուն երեսը ամեն տեսակ փուշեր ու տատասկներ , մլասակար խօտեր ծածկեր են . ուր ճախիճք թունաւոր ջրեր , գարչահատ զեռուններ , անբերրի ծառեր . թալուկ տունկեր միայն կը տեսնուին : Իսկ կէս վայրենի ազգերը կը նմանին այնպիսի արտի մը ուր արդէն կանգնած է մաքրիչ մեքենայն . ճախճախուտ տեղուանքն կը լինցուին , կը հարթուին , փուշերն ու մլասակար բոյոները խիլ սկսած են . բայց դեռ բոլորովին չէ մաքրուած : Մօտէն անցնողը ոչ այնքան գարչահոտութիւն , ոչ ալ անոյշ բուրմունք կզգայ . աւելի կը տրտմի քան թէ կուրախանայ տեսարանաց ազդեցութենէն :

ԳՈՒՐԳԵՆ . Գիտունն ու տգէտը ի՛նչ բանով իրարմէ կը տար-

բերի :

ԱՐՄԵՆԱԿ. Տգետը կը նմանի ամեն կողմանէ լեռներով պատուած ձորումը մէջ գտնուողի մը , որուն տեսութիւնը խիստ սահմանեալ է : Իսկ գիտունը կը նմանի մարդու մը , որ բլրին վրայ ելած դիտակով մը իւր շուրջը գտնուած առարկաները կը գիտէ :

ԳՈՒՐԳԵՆ. Մի՛թէ գիտութիւն ու դաստիարակութիւն ըսելով մի և նոյն բանը չ'հասկցուիր :

ԱՐՄԵՆԱԿ. Ոչ երբէք . գիտութիւնը հմտութիւն կամ ծանօթութիւն է թէ հոգեղէն և թէ նիւթեղէն աշխարհին իրացը . և ինչպէս որ արդէն ըսի , աւելի մշակեալ մտաց օգտակար կընայ լինել , իսկ դաստիարակութիւնը՝ մեր ձիրքերն կամ կարողութիւնները ըստ պատշաճին գործածելն կիմացուի . ստիկայ գրեթէ առանց գիտութեան չկրնար ձեռք բերուիլ : Մանուկ մը իր կարողութիւնները այնքան կրնայ գործածել , որքան որ իր պառկած օրոյն և նստած գիրկն իրեն ասպարէզ կը բանան իր ընդունած տպաւորութիւնքն այնքան են որքան որ այն նեղ սահմանը իր վրայ կրնայ ընել : Գաստիարակութիւնը կը յառաջադիմէ երբ տղան իր բնական գիւղին կամ քաղքին տեղեկագրութիւնը կուսնի . իր կարողութիւնները գործածելուն ասպարէզը քիչ մ'ալ աւելի կընդարձակի երբ կըսկի իր բնական տեղոյն մօտը գտնուած գետին եղերքն , ծաղկազարդ բլուրներուն շուրջը պտտել : Եւս առաւել կը յառաջագիմէ երբ դէպի բարձր Սարն կուղղէ իր ընթացքը . դագաթն կը ժամանէ և ահա իւր դէմը կներկայանայ Մուսայից Տաճարը : Ա՛հ , դու Տաճար Մուսայից , մայր գորովալիր , ի՞նչ հզօր իրաւունքներ , ի՞նչ արդար պահանջումներ չունիս վրաս , դու որ իմ մանկութիւնս տածիր , պատանեկութիւնս սնուցիր և հիմայ դեռ կինամես երիտասարդութիւնս . Այո , դեռ քու անոյշ ազդեցութիւնդ կը կանոնաւորէ մտացս և սրտիս շարժումները , կուղղէ քայլերս . քեզ պարտաւոր եմ , ինչ որ եմ և ինչ որ պիտի կարենամ ըլլալ :

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն  
Բ.

ԳՈՒՐԳԵՆ. Ի՞նչ է այդ Մուսայից Տաճարը .  
ԱՐՄԵՆԱԿ. Հոյակապ շէնք մը .

ԳՈՒՐԳԵՆ. Ի՞նչ բանի կը ծառայէ .  
ԱՐՄԵՆԱԿ. Ներեցէք նկարագրեմ ձեզ : Ասիկայ փառաւոր սիւներով զարդարուած հոյակապ շէնք մըն է եռայարկ . սարին գագաթը նուիրեալ ի Նի-Նի-Կան Բնութիւն , յիմացակո-Նի-Կան և ի Բարոյակո-Նի-Կան . և դռանը մուտքը սոկեղօծ դրովք դրոշմուած է ի ճանաչել շէնքն :

ԳՈՒՐԳԵՆ. Ի՞նչ կայ իւրաքանչիւր դաստիկոնին մէջ :  
ԱՐՄԵՆԱԿ. Իւրաքանչիւր դաստիկոնի մէջ մէյ մէկ ընդարձակ սրահ կը գտնուի զորս կորնթեան սիւնովք զարդարուած և ամեն մէկ սեան վրայ մէյմէկ հոյակապ առածներ և իւրաքանչիւր սիւն , դռան մը կը հրամայէ , ուստի սենեակ մը կը բացուի :

ԳՈՒՐԳԵՆ. Ծնորհք ընէք առաջին դաստիկոնը նկարագրել :  
ԱՐՄԵՆԱԿ. Առաջին դաստիկոնի սրահին կեդրոնը սեղան մը կը գտնուի , որուն վրայ արձան մը կայ Հերկիւլեան ի Կուր , ի Բարեխառնութիւն նուիրեալ :

Աջ կողմի առաջին սենեակն երբ մտնես , առջիդ կեղնէ պարզ համադասներով և աղնիւ մրգեղինօք զարդարուած սեղան մը չափաւոր մեծութեամբ , շիշ մ'ալ շողշողուն գինի վրան փռոցներն , պնակներն , դաւաթներն , պատառաքաղները , դանակներն ու դղարները մաքուր կը փայլին և տասներկու աթոռ սեղանին շուրջը շարուած են . առիքէն վար կշիռ մը կախուած է : Սենեակին գիմացի կողմը վառարանին վրայ կիսարձան մը կայ կանգնած , որոյ նստին մօտ դրոշմուած է Կեղեցի ի Կեւ , ապրելու համար ուսես . որմոց վրայ շարուած են առոյգ , զուարթադէմ անձանց նկարագիրներ :

Երկրորդ սենեակը կը ներկայացնէ քիչ զգեստանոց մը զորս ամբողջ արձան այրական հագուստով և չորս ալ կանանց կերպարանքով , ցուցնելով տարւոյն չորս եղանակները , բոլորն ալ պարզ բայց վայելուչ կերպով զգեստաւորուած : Ամենուն դէմքն ալ զուարթ , հագուստներուն շինուածքը ոչ այնքան մեծ ու լայն , ոչ ալ այնքան փոքր ու նեղ : Կուրծքերն ազատ , ոչ մէջքն սեղմուած և ոչ ուրիշ մաս մը մարմնոյն ճնշուած . միշտ գլուխնին թեթեւ բանով մը ծածկուած . վառարանին վրայ դրուած է Հիպոկրատի արձանը , վրան գրուած զփեցե- ի պոլիտիկէ շէնքն :

Երրորդ սենեակը կը բանայ քեզ ուրիշ տեսարան մը : Ասի-

կայ լի է ամեն տեսակ աշխատութեանց նկարներով . մէկը կը վազէ , մէկը կը քալէ , մէկը ձի հեծեր , միւսը կառք կը վարէ , ուրիշ մէկը զինաստղութիւն կընէ . մէկ քանին ալ կը պարեն համեստ շարժումներով և այլն . կարճ խօսքով ամենքն ալ շարժման մէջ կը գտնուին կամ գործով մը կը պարապին . դեղեցիկ կարմրութիւն մը կը փայլի այտերնուն վրայ : Վառարանին վրայ դրուած արձանը մատովը կը նշմարէ սա առածը մարդէս զանի քորն :

Չորրորդ սենեակը բոլորովին տարբեր տեսարան մը կը ներկայացնէ աջացդ : Որմոց վրայ կը տեսնես մէկ կողմը զեղի սեղաններ , գիշերային արբեցութիւններ , անզուսպ խառնակութիւններ , դժոխային երգեր : Բաղմականին մէկը ձեռաց պատառը բերանը տանելու տեղ դէգ ի քիթը կամ աչքը կխտթէ , գինւոյ գաւաթը դէպ ի ականջը կը տանի :

Ոմանք ալ կարկառուն հագուստներով , աղոտ անկողնոյ մէջ կզկզած , մաղերնին խառնափնթոր , ձեռուրնին ու երեսնին աղտեղի և մօրուքնին երկարած , գոյներնին դեղնած , կանչցած , խորն գետնին մէջ առանց լուսանցքի սենեակներու մէջ թուլցած , թալկացած մեղմաղձային պարապն կը տիրէ միտքերնին : Անդին այր ու կին աչուրնին կարմրած , արբեցութենէ գլտորելով , պակշտ ու վալաշ ծիծաղներով , լիրբ ու լիտի շարժումներով կը պարեն : Քիչ մ'ալ հեռուն դեռահաս պատանիներ ու օրիորդներ հազար ու մէկ պճրանքով զարդարուած , փողոցները կը ճեմեն , շինձու ծիծաղ մը կերելի քթերնուն ներքեւ , սուտ ծիծաղ մը կը ջանան ցուցնել դէմքերնուն վրայ . բայց եթէ բաւական ուշադրութիւն ընես , ճիշդը կը հասկնաս : Հագած հագուստներէն կուրծքերնին , մէջուրնին և նեղ կոշիկներուն մէջ օտուրնին այնքան ճնշուեր է որ չեն կրնար աղատօրէն շնչառել . բաղուկնին հաղիւ թէ իրենց կամացը կը հնազանդի : Վառարանին վրայի արձանը խոժոռ աչօք և որորո՞ դիժօ՞ կնշմարէ քեզ միւս կողմը որմին և մատին վրայ կը կարդացուի . այս է վախճան որոյ անցանէն ըստ լի : Հոն նկարուած են ծերացեալ երիտասարդներ , զուարդոտ օրիորդներ , գունաթափ , ակունին թափած , ականջնին դրեթէ խլացած , աչաց լոյսը տկարացած , ձայներնին մարած , քթերնին հոտառութեան զօրութիւնը յաւիտեանս կորուսած , հովէն շարժեալ անզօր եղեքի նման , կանգուն կեցած ատեն , մէկ կողմէն

միւսը կերերան : Դողդոջուն քայլերնուն չվատահելով ցպով մը կամ փողոցին պատերուն , յեղեալ կռթնած կը շրջին :

Ուրիշներն ալ կը գտնուին անկողնոյ մէջ երկնցած ծնոտնին դուրս տնկուած , աչուրնին խորը իջած , գլուխնուն մաղը բոլորովին թափած կամ ձիւն դարձած , շարունակ կը հազան , անդադար կը հեւան . ոմանք ալ գլուխնին ձեռուրնուն մէջն առած , աղիւղորմ արտասուօք կուլան կը հեծեն իրենց վաղանցուկ ծաղիկ հասակին վրայ . կուլան իրենց զօրութեանց , պատուոյ և հարատւութեան կորուստը : Կըզգան լիովին թէ իրենց գոյութիւնը կամ թէ կեանքը ծանր բեռ մ'է իրենց և անտանելի ուրիշներուն . սպառեր է կորովն մտաց . սպառեր է զօրութիւն անդամոց . կըզգան որ կարող չեն ընկերութեան բարեւալութեանը նպաստելու . կըզգան որ չունին իրաւունք ընկերութենէ օժանդակուելու :

Ուրիշներ ալ , սոսկալի տեսարան , դեռ ի ծաղիկ տիս , մուշեքնած , խելառուած , մէյ մէկ վայրի գազան դարձած — երիտասարդ և օրիորդ մաղերնին կը բզբտեն , երեսնին կը ճանկատեն , հագուստնին ծիւծիւ կը պատուտեն , կը ճչեն , կը պօռան , մէկ մը կը վազեն , կը ցատկեն , մէկ մը գետինը կը թապլտկին . և գլուխնին քարերուն կը զարնեն , և արիւնաշաղախ ու կիսամերկ գետինը ուժաթափ կը փռուին :

ԳՈՒՐԳԷՆ . Ա՛հ կարծեմ թէ ասիկայ բնական դաստիարակութեան դաղափարականն է ,

ԱՐՄԵՆԱԿ . ձիշդ այնպէս է . եթէ մանուկն իր ծնած օրէն այսպիսի բանաւորութեամբ խնամուի . անշուշտ կորովի ու առողջ մէկն կըլլայ , և եթէ օրէնքն անցնի տկար ու անպիտան կը մնայ ևն :

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն  
Գ .

ԳՈՒՐԳԷՆ . Մեծապէս շնորհակալ եմ ձենէ որ զդալի պատկերներով բնական դաստիարակութեան դաղափարականն մեզ տուիք , երկարակեցութեան օրէնքներն մեզ բացատրեցիք . շնորհք ընէք մէկ քիչ ալ իմացական և բարոյական դաստիարակութեան վրայ ճառելու :

ԱՐՄԵՆԱԿ . Մարդ երբէք չկրնար երկբայել որ հողին քան



զմարմինը գերազանց է . ուստի և հոգւոյն դաստիարակութիւնըն ալ հետեւաբար մեծագոյն և կարեւորագոյն խնամոց արժանի . մանաւանդ որ բնական կամ թէ մարմնոյն դաստիարակութեան ուղղեղը խելքն է . և ասկէ զատ ի՞նչ օգուտ է մարդոյս աւուրց , կորովի մարմին մը ունենալ ու տկար անմշակ միտք մը :

ԳՈՒՐԳԷՆ . Իրաւունք ունիք . մարմնոյն առողջութիւնն ու կորովը մեծ հարստութիւն մըն է մարդուս կարողութեանը մէջ . բայց որքան քիչ կըլլայ վայելքնիս երբ հիւանդ անկողնոյ մէջ երկնանք և որքան անհանգիստ կըլլամք խոր դայն դործածելն չգիտեմք :

ԱՐՄԵՆԱԿ . Իսկ եթէ մարմիննիս քաջառողջ է և հարստութիւննիս շատ . վայելքնիս ալ կատարեալ չլինիր :

ԳՈՒՐԳԷՆ . Այո :

ԱՐՄԵՆԱԿ . Ուրեմն մեր կենսական օգուտն է զհոգին առողջ պահել ու մշակել մեր բարձրագոյն ձիրքերը ըստ օրինաց բնութեան , զորս Մուսայից Տաճարը մեզ կը ներկայացնէ իր երկրորդ և երրորդ դաստիակներուն մէջ :

ԳՈՒՐԳԷՆ . Ի՞նչ կայ երկրորդ դաստիակներ :

ԱՐՄԵՆԱԿ . Երկրորդ դաստիակնն ալ որ յիմացականութեան նուիրեալ է , ընդարձակ սրահ մը ունի . ուր ձեռքը կշիռ մը առած է բան . և ոտքն դրուած է ծրար մը բանալիներ (լեզուք) :

Սրահին ալ կողմը առաջին սենեակը նուիրուած է յիշուածն , է բարձր պատերով և ի կեդրոնն ունի սեղան մը խիստ կանոնաւոր և վրան արձան մը ի կողմն ի կողմն նուիրուած . որմոց վրայ նըկարուած են աշխարհիս անցքերն ու եղելութիւնները դաս դաս նշանակուած , բոլոր երեւելի անձանց վարուց նկարագիրները , կենդանեաց հանգամանքն , բուսոց և տնկոց յատկութիւններն և շնչալուծական բուրգեր , Պալպեքեան կոթողներ , Բիզանեան աշտարակներ , Բանդէններ , առկախեալ պարտէզներ և շնչալուծողներ , Տուկիդիտեաններ , Պոզիպիոսներ , Լեւիտներ , Գալիտոսներ , Խորենացիներ և շնչալուծողներ :

Երկրորդ սենեակը , յիշուածն նուիրեալ , կը պարունակէ որմոց վրայ հիանալի տեսարաններ , Սպանիական դղեակներ , Եղիական պատերազմներ , Արկոնեան արշաւանք , Միլտոլեան դրախտներ , Տանթէեան դժոխներ , Հազար ու մէկ Գիշերներ և շնչալուծողներ :

Երրորդ սենեակը քան զնախորդ գերազանց կը հանդիսա-

նայ իր բազմատեսակ զարդերովը , դիտակներ ամեն մեծութեամբ շարուած , մաթեմատիքական ու բնականական գործիներ ու մեքենայներ , խոշորացոյցներ , մոգական լապտերներ , ելեքդրականութեան սնուկներ , հաշիւներ , ճախարակներ , ճոճանակներ , Գորիչելեան խողովակներ և շնչալուծողներ երկնագունտներ , տիեզերացոյցներ , ցուցակներ , կողմնացոյցներ և շնչալուծողներ կը բացուին . ոսկորներ , յօդուածներ , մանրաթելեր , մորթ և շնչալուծողներ :

Արգիտիմիսներ , Գլխոններ , Լժանտոններ , անկիւններ , քառակուսիներ , բոլորակներ , կանոններ և շնչալուծողներ , և Լերիսներն , Պուռտոններն այբուբենից գրերը հազարաւոր ձեւերու կմտցնեն . Արիստոտելներն , Ուէյթիներն հաւաքաբանութեան եռանկիւններ կ'յօրինեն , Պիւֆօններն ու Գիւլիէները երկրագունտն կ'կշռեն , Յերմութիւնը կը չափեն , Ֆրանքլիններ փայլակներ կ'ցայտեցնեն , Տակեաներն աղեղան գոյները , լուսաւոր ձեռքով մը Յ գիծ , հարթ ու յղկուած տախտակի մը վրայ առանց գրչի կամ վրձինի կ'գծագրեն . Նեւտոններն , կաշիւներ , Գորիչելիները բարձրէն ի վար դնտակներ կ'ձգեն , ջուրը խորէն ի բարձր կ'հանեն . Հիպոկրատներ , Գաղինոսներ , կաշիէներ մարդոյս կազմուածքը կորոնեն և շնչալուծողներ , Լոքերն , Տէքարտներ , Քանտիլեաքները մարդկային զգայարանքներն , ուղեղն ու սիրտը կը զննեն :

Չորրորդ սենեակը կներկայացնէ շիթթ և խառնակութիւն մէկ կողմն որմոց նկարուած է պատերազմաց մէջ տեղն ձիթենւոյ ոստեր , սպիտակ դրօշակներ , հասարակածին մէջ ձիւներ , սառոյցներ , ամեն տեսակ նիւթեր իրարու հետ խառնուած , համբարուած : Վիչ մը հեռուն սոսկալի հրէշներ , ցնորքներ , արտառոց ստեղծագործութիւններ մարդիկ ծովուն մէջ կը շրջին , ձկները ցամաքը կարչաւեն , փիղերն ու ուղտերը յօդու կը թափառին :

ԽՕՍԱ.ԿՅՈՒԹԻԻՆ

Դ.

ԳՈՒՐԳԷՆ . — Կատարելապէս շնորհակալ ըլլալով ձեր բարեսրտութենէն , որով հաճեցաք իմացական դաստիարակութիւնն ալ ըստ բաւականին բացատրել , կը խնդրեմ շնորհք ը-

նէք բարոյական դաստիարակութիւնը յառաջ բերելու :

ԱՐՄԵՆԱԿ. — Բարոյական դաստիարակութիւնը աւելի գե-  
րազանց է իր երկու նախորդներէն . զի կը վերաբերի մեր դո-  
յութեան մասին , որ թէև չէ բոլորովին ազատ ինքն իրմէ  
գործելու , բայց մեծապէս կազդէ մեր գործոյն և որոշմանը  
վրայ . ինչ երեւելի բարեմասնութեանց տէր անձինք շատ ան-  
գամ իրենց խորհրդոյն հակառակ գործեցին կրից բռնութե-  
նէն իբր թէ յաղթեալ : Ինչ սքանչելի կրից տէր անձինք իրենց  
ուսուցած վարդապետութեանցը դէմ մեղանշեցին . Պէյքըն  
իր փառաւոր անունը կաշառաբեկութեան ազտովն բծեց , և  
ինչ օգուտ էր մեզ բոլոր աշխարհիս փառքն ու հարստութիւ-  
նը շահիլ եթէ սրտերնիս գոհունակութեան բերումն չունենար .  
Ինչ օգուտ էր մեզ ուղիղ տրամաբանութիւն մը , պայծառ ե-  
րեւակայութիւն մը և ամուր զօրաւոր ըմբռնող յիշողութիւն  
մը եթէ փափուկ զգացումներէ բոլորովին թափուր չըլլային ,  
եթէ երջանկութեան սէր և յարմարութիւն չունենայինք . ինչ  
երեւելի իմաստասէրներ , ինչ հոյակապ աշխարհակալներ չկըր-  
ցին գոհ ըլլալ աշխարհիս վրայ չկրնալով չափ դնել իրենց ըղձիցը :

ԳՈՒՐԳԷՆ. Ինչպէս կրնամք երջանկանալ աշխարհիս վրայ :

ԱՐՄԵՆԱԿ. Զափաւորելով մեր յօժարութիւնները , հետե-  
ւելով այն օրէնքներուն կամ թէ , որ մեզ կը ծաւալէ Մուսայից  
Տաճարին երրորդ դաստիակոնը :

ԳՈՒՐԳԷՆ. Ինչ կը պարունակէ այդ :

ԱՐՄԵՆԱԿ. Երրորդ դաստիակոնի սրահին մէջ սեղան մը կայ բո-  
լորակաձեւ , որուն վրայ գեղեցիկ արձան մը կայ մարմարիոն , որ  
ձեռքը արսեայ մը բռներ է , որուն վրայ սիրտ մը դրուած է .  
ցուցնելով մարդոյս խիղճն ու զգացումները :

Աջակողմեան առաջին սենեակը կը ներկայացնէ այսինքն  
լուսաւոր ձեռք մը հարթ ու գիւրազգած տախտակի մը վրայ  
կը գծէ երկայնութեամբ իրարմէ տարբեր երեք ուղիղ գիծ  
ի ձեւ եռանկիւնուոյ . որմոց վրայ կերեւի տիեզերքն ամբողջ .  
հաստատուն աստեղքն , մարդակներն , ու անոնց արբանեակ-  
ները , երկրիս ժողովուրդներն , անբան կենդանիներն , բու-  
սականին ու հանգայինները ևն . ամենքն ալ նոյն ամենակարող  
ձեռքին արդիւնքն ըլլալուն զմուռն իրենց վրայ կկրեն . ա-  
մենքն ալ անկէ բղխած լուսովը կը լուսաւորուին , կենդանու-  
թիւնովը կեան ու կմնան :

Երկրորդ սենեակը կը ներկայացնէ մարդկային ազգը բո-  
վանդակ երկրիս զանազան կլիմայիցը ներքեւ իրենց զանազան  
դոյներովն ու կաղմուածքովը , կովկասեանը , խաբշիկը , ամե-  
րիկացին ևն . իրենց վիճակին մէջ իրարու հետ սերտ կապերով  
կապակցած , մէկն զմիւսը կը համբուրէ , իրար կը դրկեն , ի-  
րարմով կը զուարճանան : Ծերը իր որդւոյն թեւուցը վրայ յեց-  
եալ իր դողդոջուն քայլերը կը փոխէ : Անդին դասերց մէկը  
կակուղ ու գիւրամարս կերակուրներն առջին կը դնէ , միւսը  
ընտիր գինին իրեն կը մատուցանէ : Անդին այր մը քիրտն ճակ-  
տէն վազելով տանը դռան կը մերձենայ , տիկինն ալ իր կայ-  
տառ մանկիկն գրկած մաքուր հագուստով , զուարթ դէմքով  
դինքն դիմաւորելով նոր կենդանութիւն մը կըտայ վաստակ-  
եալ ջիղերուն , կրսփոփէ սիրտն , փառատելով մտքէն աղե-  
տալի անցից մութ յիշատակը :

Անդին հայր մը իր զաւկները լաւ դպեատաւորած առջին ձգած ,  
կմշակէ անոնց քայլերը և դէպի բարձր սարն կուղղէ զանոնք :

Անդին ծանր բեռին ներքեւ ճնշուած մարդուն մօտն կը  
վազեն հարիւր և բարեկամական բազուկնին երկնցուցած ծան-  
րութեան բեռը կը թեթեւցնեն :

Թագաւորները գահուց վրայ բազմած իրենց ծերունի պաշ-  
տօնէիցը հետ կխորհրդակցին սեղանին վրայ դրուած օրինաց  
գրքերը կը թղթակցեն :

Կրօնից պաշտօնեայնները ձեռքերնին արմաւենուոյ ոստեր և  
միւս ձեռքերնին Ս. Գիրք , սէր և խաղաղութիւն կը բարոզեն :  
Մեծատունները իրենց դռները բաց թողած կարօտելոց  
հագուստ և սնունդ կը աշխեն :

Ծառայք և աղախինք սօթթած բազուկովն ժրութեամբ  
իրենց տեարցը շահուն կաշխատին :

Դաստիարակը տղայքն ժողոված ակնածելի դիմօք մանրա-  
մասնաբար Մուսայից Տաճարը կպտըտցնէ :

Անդին քաղքին պարսպացը վրայ անթուլ կհսկեն զինուք  
վառեալ :

Կատովներն , կիկերոններն , Տէմոսթէներն ամպիրոններն ե-  
լած ամենայն զօրութեամբ կատենաբանեն կատարիներն ու  
փլիկպոսաններն իրենց զայրացումը պատճառելով :

Մեծն Պետրոսներ , Լուդովիկոսներ , Մէտէչիններն , Մեկենաս-  
ներ թափնի պսակօք կպսակեն գնարերգակներն :

Մուրաւորներն , Ռաֆայէլներն , Լազարներն հոյակապ պա-  
լատներ կը շինեն :

Տատեանները , Տիւղեաններն , Աստուածատուրեաններ եւն .  
քսակնին բացած , ազգային գրականութեան յառաջադիմու-  
թեան կնստատեն :

Անդին մէկը վերաւորելոյն վերքն կըլուայ , դաւաթ մը կազ-  
դուրիչ գինի կամ պաղ շուր կըլսմցնէ ու ժաթափ անկելոյն :

Երրորդ սենեակը կներկայացնէ մարդս իր ամեն գրիցը կամ  
կացութեանը մէջ . քաջառողջն թէ հիւանդը . հարուստն թէ  
աղքատ . հզօր թէ տկար . գիտուն թէ տգէտ : Եւ իր կարո-  
ղութեանց ու ձրից բոլոր բնակարաններն կամ գործարաննե-  
րը զատ զատ բացուած և խոշորացոյց ապակիներու միջոցաւ կը  
զննուին :

Անդին կայ հայելի մը զարմանալի , որուն մէջ նայողը զինքը  
կը տեսնէ :

Անդին Ալրէոններ , Պինտարներ , Արիստոներ , Լորտ Պայրըն-  
ներ , ոսկի քնարներու վրայ կերգեն , Տերենտիոսներն ու Յօփ-  
նադներն կը գօշեն :

Չորրորդ սենեակը կբանայ քեզ ուրիշ տեսարան մը : Մէկ  
կողմը որմին գծագրուած են աշուրնին բաց կոյրեր որ ամենա-  
կարողին կնիքը ամենեւին չեն կրնար տեսնել . ուրիշներ ալ ա-  
մենեւին անոր գոյութեանը չեն հաւատար , կշիթեն զայն ա-  
րեգական , կրակին և լն . հետ : Ոմանք ալ անկեալ կերկրպագեն  
կենդանեաց ու բուսոց :

Անդին շատերը ահաբեկած , այլ այլալած արեւուն խա-  
ւարմանէն ողջակիզներ կը մատուցանեն դերագոյն էակն հաշ-  
տեցնելու համար : Քիչ մը հեռուն պատերազմի բանակներ  
կազմած , ձեռուրնին ի վեր համարածած երկու կողմէն ալ  
յերկնից օգնութիւն կմաղթեն մէկն զմիւսը ընկճելու համար :

Միւս կողմը որմին կը տեսնուին մարդիկ կնճուաւոր ճակ-  
տով , մաղձային գունով դիմաց , և հրաշայտ աչօք իրար կը  
բզքտեն , իրարու մահ կապառնան և իրարու արիւն կքամեն :  
Անդին մէկն զմիւսը կներկայացնէ , մէկն միւսին երեսը կչա-  
ռագունէ , մահուան քրտինք թափելու առիթ կուտայ : Ան-  
դին գաղանաբարոյ մարդիկ անպատասպար փափկասուն տիկ-  
նանց վրայ կյարձակին , ծաղկափթիթ մանկունքն ոտաց ներ-  
քեւ կճնչեն :

Քիչ մ'ալ հեռուն ադամանդ ուզողին բիւրեղ կը մատու-  
ցանեն , ոսկւոյ տեղ պղինձ կը քչեն :

Անդին խումբ մը , լէգէհոն մը մարդիկ ցուրտ երկն քին ներ-  
քեւ գիշերն անպատասպար կը շրջին , գիշերն ի տիւ տիւն ի գի-  
շեր վերածելով :

Թագաւորներն կամ իշխանաւորները իրենց ատեանները  
թողեր , իրենց զօրքերը մոռցեր , թշնամոյն յարձակմանէն ան-  
հօգ՝ անուշիմ երիտասարդաց հետ կը զուարճանան , ուրիշները  
անբանից հետ կընկերակցին :

Միւս կողմը որմին նկարուած են մարդիկ տուանձինն առանց  
կապակցութեան ուրիշին հետ , մէկը գունաթափ ոսկւոյ քսակ  
մը կուրծքն բռնած սաստիկ կը ճնչէ զայն , ուրիշ մը ամայի  
վայր մը փոքրիկ գրիչով մը գետինը փորելով իւր գանձն կը  
թագուցանէ հոն : Ուրիշ մէկ մը երկայնահասակ , դեղին մա-  
զերով , կապոյտ աշուրներով , և ճանկաւոր մատուրներով շին-  
ծու ժպիտով մը պարզամտին կը մօտենայ , և ձեռքն եղածը  
կը յափշտակէ :

Անդին մէկը գետինը ընկած թղթին կտորներն կը ժողովէ  
ու հետագորգութեամբ կնայի թէ արդեօք մէջը բան մը կա՞յ  
գրուած :

Ուրիշ մէկը դիմաց գոյնը գեղնած , թալկացած , աչքն  
չկրնար իր եղբորն դարձնել :

Անդին տուն մը կայրի , մէջն բնակողները ձեռուրնին եր-  
կնցուցած յօգնութիւն կը կոչեն զգրացիքը : Դիմացը նստեր  
մարդ մը կծխէ թէև կայծերն իրեն կը մօտենան :

Անդին մէկը զեղի սեղաններ պատրաստած . անդին մէկը  
խորին խորհրդածութեանց մէջ ընկղմած , ուրիշ մէկը ապշած ,  
աշուրներն իբր թէ կը թափառին . խօսելու միջոցն յաճախակի  
կընդմիջէ իբր թէ խօսից կապակցութիւնը գտնելու համար :

Ուրիշ մէկը գիրքերն իր լուրջը հաւաքած , աշուրները իբր  
թէ գուրս ցցուած և երեսոց գոյնն կանաչացեր է :

ԳՈՒՐԳԷՆ . Մուսայից տաճարն նկարագրած ատենդ կը խոս-  
տովանիմ որ խօսքդ չընդմիջելու համար չը համարձակեցայ ինձ  
տարակուսական երեւած կէտերուն վրայ հարցումներ ընել . իսկ  
հիմա որ այս մասին երկիւղ չմնար , կը յուսամ թէ ազատու-  
թիւն կըտաք խօսելու :

ԱՐՄԵՆԱԿ. Շատ ուրախ պիտի ըլլամ եթէ այդպէս ընէք . մանաւանդ որ մուսայից տաճարը նկարագրելովս նպատակ դըրած էի ինձ դաստիարակութեան գաղափարը իբր թէ երեւակայութեան մէջ մարմնացնել իր ամեն մասանցը վրայով մանրամասնաբար խօսակցելու համար :

ԳՈՒՐԳԷՆ. Մուսայից տաճարը եռայարկ ձեւացնելովսիդ , անշուշտ դաստիարակութեան երեք ճիւղն կամ բաժանումը դիտած էիք . արդ միթէ ասոնց զատ զատ և յաջորդաբար պիտի ձեռք նետուի :

ԱՐՄԵՆԱԿ. Դաստիարակութիւնը որքան որ երեք ճիւղ դադարաբար կը բաժնուի , այս ճիւղերը այնքան սերտ կապակցութիւն մը ունին իրարու հետ , որ անհնար է գործով այնպէս վարուիլ . անհնար է առանձինն բնականապէս և յետոյ իմացապէս , հուսկ յետոյ բարոյապէս դաստիարակել մէկը : Այս բաժանումը միայն դաստիարակին միտքն ըլլալու է իր գործը անթերի կատարելուն դիւրութիւն մը ստանալու համար :

ԳՈՒՐԳԷՆ. Ե՛րբ կսկսի դաստիարակութիւնը :

ԱՐՄԵՆԱԿ. Դաստիարակութիւնը , ճիշդը խօսելով մանկան ծնած օրէն կը սկսի : Խելացի մայր մը անմիջապէս յայն կողմէ իր ուշադրութիւնը : Կը դիտէ որ մանուկը բնական աղբամբ մը կը սկսի լալ երբ ցաւ մը ունենայ կամ անօթի ըլլայ . ուստի նախաձեռնելով անոր լացը , ամեն ջանք կընէ զայն արգիլել . այսինքն գիտնալով որ այս ինչ ժամուն պիտի անօթենայ , ժամանակին կաթը կձծցնէ , կամ թէ դիտելով որ այն ինչ ժամուն պիտի քուն ընայ , ժամանակին անկողին կդնէ , և ասանկով հեռի կպահէ զայն ունականալէ :

Նոյնպէս իմացականութիւնը մէկ քիչ բացուիլ սկսելուն ձեռն ի գործ կըլլայ իրաց անունները , այսինքն մանկան գործողութեան կոպարին մէջ գտնուած իրաց անունները յստակ արտասանել տալ , և աղաւաղեալ արտասանութիւնը որքան որ կազմուածքէ ալ կազդուի , բայց մեծապէս ալ կազդուի ծնողաց անուշադրութենէն . այսինքն ոմանք անխոհեմ անձինք մինչեւ անգամ խրախոյս կըտան մանկանց յոռի արտասանութեան մը ունականալ . նոյնպէս ոմանք իրենց մանկանցը վրայ աղբելու համար . սոսկալի վէպեր պատմելով զանոնք կահաբեկեն , որով երկչոտութիւնն ծնունդ կառնու իրենց սիրտը և եթէ վերջն ալ ուշադրութիւն ընող չըլլայ , խորին կարմատանայ սրտերնին :

Նոյնպէս կը գտնուին այնպիսի ծնողք որք երբ կտեսնեն որ մանուկն վար ինչալով մէկ կողմը կը ցաւի , կեղնեն գետինը կը ծեծեն մանկան սիրտը սփոթելու համար , և ասանկով վրէժխնդրութեան զգացում մը կարթնցնեն . ոմանք ալ չափազանց սիրով մը մոլեալ կը ջանան մանկանց ամեն յօժարութիւնները կատարել , ամենեւին չեն արգիլեր կամ թէ չափ մը սահման մը չեն դներ ուտելեաց և ըմպելեաց նկատմամբ որով և ոկրամոլ կըլլան : Ունայն կամ անվայել խօսքեր ծնողաց բերանը յաճախելով մանկունք ալ այն կը սովորին , մանաւանդ որ առաջին տպաւորութիւնները տեւողական ըլլալուն շատ անգամ մինչև ի գերեզման չեն թողուր այս ունակութիւնները :

Գ. Ըսել է որ մանկանց առաջին դաստիարակները ծնողքն գլխաւորապէս մայրերն են , և մինչև ե՛րբ դաստիարակութեան պաշտօնը պիտի վարեն ասոնք , կամ թէ ե՛րբ կը լրանայ ծնողաց պարտաւորութիւնը :

ԱՐՄԵՆԱԿ. Եթէ ծնողք ձեռնհաս ու կարող լինէին , մինչև ի կատարեալ հասակն մարդոյ պիտի վարէին այս պաշտօնը զի անհնար է որ իրենց չափ հաւատարիմ ըլնայ օտարը մանկանց օգտին և բնականէն իրենցմէ աւելի յարմարութիւն ունենայ այս գործոյն . բայց աշխարհիս զբաղմունքն կամ անձնական անկարողութիւնը ընդհանրապէս արգելք ըլնալով , կըստիպուին ծնողք իրենց տեղը ուրիշ անձինք ընտրել . կամ թէ մանկանց ձեռքէն բռնելով , ու սիրայորդոր խօսքերով ջիղերնին կազդուրելով դէպի մուսայից տաճարն ի գազաթ սարին առաջնորդել , և հոն ծառայող պաշտօնէիցն յանձնել զանոնք , որ ուխտադնացից համար պատրաստուած զանգակներն զանոնք ընդունելով տաճարին առաջին դաստիկոնին ծաւալած երկայնակեցութեան սկզբանցն համեմատ զանոնք սնուցանելով ու խնամելով , ամեն օր առաջին ընկած տաճարին սենեակներն կարգով կը ջեցնեն և տեսածնուն համեմատ կըթութիւններ կտնօրինեն :

Գ. Երկրորդ գտնուին սրահին կեդրոնը գտնուած արձանին ոտքն գրուած բանալեաց ծրարն ինչ կը նշանակէ :

Ա. Կը նշանակէ լեզուներն , որոնց որ և է մէկօրին գիտութեանց գանձերն կը բացուին . իրաւ է որ ծնողք իրենց զաւկընին դէպ ի սարն առաջնորդելով իրենց մայրենի լեզուն իրենց ուսուցած կըլնան . բայց ասիկայ գրաւոր լեզուն չըլնա-

456  
40

լով, դպրոց երթալնուն առաջին գործքը դաստիարակաց այս պիտի ընայ սանից աւանդել :

Գ. Լեզուի մը ուսումը բանալին կամ նախադուռն ընալով բոլոր գիտութեանց անշուշտ կարեւոր մասն է դաստիարակութեան գործոյն մէջ : Արդ ինչ կերպով լեզուի ուսումը կըրնայ ուղղուիլ օգտակարութեամբ :

Ա. Լեզուի ուսումնը համար երկու մեղոտ կայ . մէկը վերլուծական և միւսը համադրական . վերլուծական մեղոտը խիստ բնական է , համադրականն աւելի ուսումնական : Վերլուծական մեղոտով կառնենք իմաստ մը և անոր մասերը կը զրտեմք իր տարերքը այսինքն բառերու կը լուծեմք , համադրական մեղոտով խօսից տարէրքն բառերը զատ զատ կառնեմք , իրենց զօրութիւններն , յատկութիւնները կամ հանգամանքը կը քննեմք և իրենց բաղադրելու մերձաւորութեան օրինաց համեմատ կը բաղադրենք , իմաստ մը կը կազմեմք : Առաջին մեղոտով աւելի գործնական լեզուագէտ մը կը ընայ . երկրորդով աւելի գիտնական : Համադրական եղանակաւ մինչև ցայժմ ազգային վարժարանաց մէջ լեզուագիտութիւնը աւանդուած մեթոտը , որ խիստ շատ է . հետեւաբար խիստ անախորժ նամակաց . իսկ վերլուծական մեթոտը զուարճալի է ևս առաւել օգտակար կրնայ լինիլ նոր լեզուաց մէջ , զորս պարզապէս ընթեռնելով և հասկնալով գործնական մարդ մը կրնար գոհ ընալ , խօսակցիլ գիտել ալ պէտք է : Օտարագրեաց հետ հաղորդակցելու համար : Իսկ կերեւի թէ ամենէն ապահով ընթացքը երկու մեթոտ ալ ի միասին գործածելն է ընդմիջելով . զի ան ատեն թէ ունակութեամբ և թէ տրամադրութեամբ տէր կը ընայ մարդ լեզուի մը :

Գ. Միթէ լեզուագիտութիւնը գիտութեանց բանալի մը լինելէ զատ ուրիշ օգուտ մը չունի :

Ա. Լեզուագիտութիւնը , եթէ իմաստասիրօրէն ուղղուի ըստ ինքեան իբր հզօր միջոց դաստիարակութեան կրնայ համարուիլ . մանաւանդ հին լեզուաց ուսումը :

Գ. Որո՞նք են հին լեզուները :

Ա. Հին լեզուք ըսելով : կիմանամ մեռեալ լեզուներն որովք հիմա չեն խօսուիլ ինչպէս է մեր նախնեաց լեզուն , լատիներէն ու Հելլեններէնը ևն :

Գ. Ինչ օգուտ կը ազդուի այնպիսի լեզուէ մը որով հիմա չխօսուիլ :

Ա. Հին լեզուները թէև հիմայ չեն խօսիլ , սակայն խիստ կարեւոր մաս մը կը կազմեն իմացականին դաստիարակութեանը մէջ : Այս լեզուք գտնուած գրեանց ընտիրները հոյակապ գործեր ընալով միշտ իբր օրինակ կրնաս հասկնալ . մանաւանդ որ այսպիսի նրբամիտ շարագրածոց ընթերցմանը ատեն եթէ երկու լեզուաց տարբերութիւններն իլոյս բերուին , եթէ ասութեանց զանազանութիւններն , քաղցրաձայնութիւնքըն , փափկութիւններն նշարուին , ոճոյ գեղեցկութիւնը կամ ազդուութիւնը գիտուին , ո՞րքան կօժանդակին յիշողութեան և տրամաբանութեան մշակութեանը : Եւ ի՞նչ ըսեմ իրենց պարունակած գիտութեան անբաւ գանձուցն , երեւակայութեան հոյակապ նկարուցն նկատմամբ : Իրաւ է որ ումանք հարեւանցի տրամաբանութեամբ մը կարծելով թէ այս լեզուք գրուած գրոց մէջ պարունակուած գիտութեան գանձերն են միմիայն նկատուելիք բանը . ուղեր են անոնց ուսմանը վերջ դնել . թարգմանութիւններով անոնց պաշտօնն կատարել ուղելով : Բայց ո՞ր հելլենագէտը , ո՞ր լատինագէտը , ո՞ր հայկաբանդ կրնայ ասոր համոզուիլ , ո՞ւր կրնայ լեզուագէտն բնագրաց անհամեմատ գեղեցկութիւնն վայելել . ո՞ւր կրնայ ասութեանց նրբութիւններն գտնել , դարձուածոց փափկութիւններն տեսնել : Ո՞ր լեզուին մէջ կրցեր է մարդ Հոմերոսն այն ախորժակովն վերծանել , որքան որ կըրնայ բնագիրն ձեռքն առած ատեն : Ո՞ր հայկաբանդ կրնայ ըսել որ եթէ Եղիշէն կամ Եզնիկը մեր աշխարհիկ լեզուին թարգմանուի նոյն աստիճան զուարճութեամբ ՚ն օգտիւ կրնայ կարգացուիլ . և ի՞նչ զարմանալի բան է որ Եւրոպայի մէջ ամենէն երեւելի գրագիրները քաջահմուտ են այս գիտնական լեզուներուն . և ուր մեծ փոյթ կայ այս լեզուաց ուսմանը , հոն մեծահամբաւ գիտնականները կը յաճախեն : Ո՞ր ազգ այս օրուան օրս Գերմանացոց չափ հմտութիւն ունին այս լեզուներուն և ո՞ր ազգ անոնց կը հաւասարի ամեն տեսակ մակացութեանց մէջ : Գիտութեան ազբիւրը Գերմանիա է այսօր . բոլոր միւս երկիրները անտի կը խմեն , անով կուսգուին :

Գ. Երկրորդ դասիկոնի աջակողմեան առաջին սենեակին մէջ գծագրուած անցքերն ու եղելութիւնները , յիշատակարաններն , կենդանաբանական ու բուսաբանական ևն գործերն , որ անշուշտ տիեզերական ազգաց պատմութիւնն , աշխարհագ-

բութիւնն , ժամանակն , գիտութիւնն և բնական պատմութիւն կենդանեաց և բուսոց կը նշանակէ , և աւելի յիշողութիւնը սրելու կը նպաստէ , ինչ կերպով ուղղելու է անոնք :

Այս ուսումներն իրաւ է որ երեւոյթով միայն յիշողութիւնը սրելու մեծապէս կօդենն . բայց եթէ լաւ ուղղութիւն մարդոյս բոլոր իմացական ու բարոյական կիրքերը կրնան մշակել : Այսինքն եթէ տղոց ուշադրութիւնն միայն չար անուններու և թուականներու ու անտարբեր անցքերու դարձնելու տեղ , օգտակար կէտերու մանրամասն հանգամանքն մտնեն եղելութեանց պատճառներն ու արդիւնքը ի լոյս բերեն , տեղագրութիւններն ճշգրութեամբ դժագրեն , նոյնպէս կենդանաբանութեան ու հանգաբանութեան ընդհանուր բառագիրքն աչքէ անցնելու տեղ , մասնաւոր կէտեր որոշեն և մանրամասն հանգամանքները քննեն . ասանկով յիշողութեան հետ միանգամայն տրամաբանութիւնն , երեւակայութիւնն ու սիրտն ալ կը մշակի , իմաստասիրական դարձ մը կառնէ համբալին սիրտը , որ երբէք չը կրնար արհամարհել :

Գ. Երրորդ սենեակի կամ թէ տրամաբանական ուսմունքն ինչպէս ուղղելու է :

Ա. Բնական և մաթիմատիքական ուսմունքն ուղղելու ատեն ոչ այնքան աշակերտը քաջ բնագէտ ու չափաբան ընել ջանալու է , այլ գործնական տրամաբանող , այսինքն ոչ այնքան քաջահմուտ բոլոր ճշմարտութեանց բազմաճիւղ բնաբանական ուսմանց , այլ բաւական հմտութիւն երեւութից բնութեան սովորական իրաց վրայ ծուռ ըմբռնումներ չունենալու համար . չափաբանական նուրբ հաշիւներուն վախճանն ալ , բոլոր ուսանողները քաջ չափաբան ընել չէ , այլ վարժել զմիտքն անընդհատ խորհրդածութեան երկարատե վերացուցման որով և միանգամայն կամքն ալ կը զօրանայ . և այս մասին խիստ ազդու կրթութիւններ կը մատուցանեն գրահաշուի բարձրագոյն մասերն : Իսկ աստղաբաշխական մասն բնագիտութեան խիստ հզօր կերպով կընդարձակէ զերեւակայութիւնը : Ուսանողը երբ երկնից անսահման գաւառները ահագին գունտերն գիտել կըզբաղի , կը վերանայ կապչի , կը հիանայ միտքը , կը լեցուի սիրտն ահիւ ու գողով վսեմութեան գաղափարն իր բոլոր կատարելութեամբը ծնունդ կառնու :

Գ. Եթէ գիտաւորութիւննիս գլխաւորապէս զտրամաբա-

նութիւնը մշակելն է , ինչո՞ւ համար տրամաբանութեան պարզ ուսումովը չենք բաւականանար :

Գ. Արդէն շատ անգամ փորձուած բան մըն է որ տրամաբանական հաւաքաբանութիւնն ևն ասանկով խիստ քիչ մարդիկ գործնական և տրամաբան կրցեր են ընալ : Քաջ տրամաբան ընալու համար ունականալու է ուղղախոհութեան : Տրամաբանական կանոններն առնելը պարզապէս յիշողութեան գործն է . բայց ուղղիղ կերպիւ տրամաբանելու վարժուիլը երկարատե աշխուրջ և զգուշաւոր դատման գործն է :

(Տրամաբանութեան օրէնքներն ուսնիլը պարզապէս յիշողութեան գործն է . իսկ նոյն օրինացր համեմատ տրամաբանելն , աջալուրջ ու զգուշաւոր դատման ունականալով կըստացուի ) .

Գ. Բնական գիտութիւնները ինչպէս կրնամք ուղղել ազդային վարժարանաց քով :

Ա. Բնական գիտութիւնները իր ընդարձակ նշանակութեամբը ազդային վարժարանները սանից աւանդելը գրեթէ անհրճարին բան է այսօր , թէ և մեծ գծուարութիւն մը չկայ ընդհանուր հայեցողութիւն մը ընելու պէս բան մը ընել անոնց ինչպէս և բնական պատմութեանց նկատմամբ :

Գ. Ո՞րն աւելի օգտակար և դիւրին է մեզ ուսնել բնական թէ իմացական գիտութիւնները :

Ա. Բնական գիտութեանց կարեւորութիւնը երբէք չկրնար ուրացուիլ , բայց շատ ծախուց և գործեաց կ'կարօտի փորձերն ընելու . որ բնաբանդ կրնայ առանց գործեաց աշակերտին կատարելապէս հասկցնել զելեքտրականութիւնը : Իսկ իմացական գիտութիւնը այսպիսի գործեաց չկարօտիր . ամեն մարդ իրեն փորձին համար իրեն գործիքն ունի իր հոգին , ուստի և կրնայ ուղածին չափ անոր վրայ փորձ փորձել , քաջ ծանօթութիւն ստանալ : Հայելիի նման բան մ'է մարդոյս միտքը . անոր մէջ զինքը կը տեսնես որքան որ ուշադրութեամբ դիտես . այնքան լաւ զինքդ կը ճանչես : Ասկէ ի զատ իմացական գիտութիւնը վերացեալ գիտութիւն մը ընելով շատ կը սրէ մարդուս միտքը և ճիշտը խօսելով իր անձը իրեն կը ճանչցնէ :

Գ. Ինչ կիմանաս բարոյական գիտութիւն ըսելով :

Ա. Բարոյական գիտութիւնը քան զամէն ուսմունս գերազանց կը հանդիսանայ . զի այն կը բանայ մեզ երջանկութեան

պողոտայն ճշմարիտ գաղափարը . բոլոր միւս գիտութիւնները  
ասոր աղախինքն են և ասոր կապուելովն իրենց արժանիքն կը  
ճանցուի . միւս գիտութիւնները կը մշակեն , կը պատրաստեն  
մեր միտքը , բարոյական սկզբանց , ճշմարտութեանց խորքն  
թափանցելու : Գերագոյն էակին գոյութեան հաւաստիքն , և  
անոր ստորագելիքն քննելը անշուտ կ'ընդարձակէ մեր միտքը  
և կը լուսաւորէ խիղճը մեր երեք պատիկ պարտաւորութիւննե-  
րը սահմանելու և ըստ այնմ գործելու :

Գ. Արդեօք խիղճը առանձին կարողութիւն մի է , թէ տրա-  
մաբանական գործողութիւն մը :

Ա. Անշուշտ առանձին կարողութիւն մի է :

Գ. Թէոր առանձին կարողութիւն մի է խիղճը և իր հեղինա-  
կութիւնը վստահելի կամ թէ հետեւելի , ինչո՞ւ հոն այնքան  
ահագին տարբերութիւններ կերելին աշխարհիս վրայ միևնոյն  
կէտին ճշմարտութեան նկատմամբ : Հնդկաստանցիք այրի կինը  
իւր մեռեալ ամուսնոյն հետ հրոյ ճարակ կրնէին : Եփեսոսի մէջ  
Աստղկան տաճարը ամեն տեսակ զաղիր գործոց խրախոյսն կը  
համարուէր . Բարիլոնի մէջ ի՞նչ տեսակ խայտառակութիւններ  
չէին գործուէր ևն :

Գ. Եթէ խղճի ըմբռմանը կամ թելադրութեանը նկատմամբ  
տարբերութիւններն իւր գոյութիւնը կ'եղծանեն , ուրեմն տրա-  
մաբանական վրիպմունքն ալ տրամաբանութեան կարողութիւ-  
նը պիտի եղծանեն :

Ա. Միջին դարուց իմաստակներն ինչ արտառոց կարծիք-  
ներ ու վարդապետութիւններ չքարոզեցին :

## ՎԵՐՉ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ

2013



